**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**01.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/29-7 ծածկագրով գնման պայմանագրի**

ք. Երևան

<<16>> 06 2023թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Ադամյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և <<Ֆիրմա-Արեալ>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ն. Բադալյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետև կողմեր, ղեկավարվելով ՀՀ գնումների մասին օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.03.2023թ. կնքված ՆՄԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/29-7 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Հաստատել այն, որ Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները նախատեսված են: Ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով ապրանքն ընդունելու օրվան հաջորդող 90 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում:

1.2 Սույն համաձայնագրի դրույթները տարածվում են Կողմերի միջև 01.03.2023թ.-ից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ
«Նորք Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100
Մ. Ադամյան

(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
<<Ֆիրմա-Արեալ>> ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 4/117
ՀՎՀՀ 01507396
h/h 163038105777
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ< Մյասնիկյան մ/ճ
areal89@inbox.ru
093-48-20-84
Ն. Բադալյան

(ստորագրություն)
Կ.Տ.